

ԿԱՐԳ

ՍՈՒՐՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սուրվենցիայի տրամադրման նպատակով Հանձնաժողովի կողմից քննարկվում և գնահատվում են 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով արդեն իսկ նախատեսված սուրվենցիաներից բացի այլ սուրվենցիաներ ստանալու նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացվող՝

1) մինչև 500,0 մլն. ՀՀ դրամ համայնքային բյուջե ունեցող համայնքների դեպքում՝ յուրաքանչյուր ծրագրի համար 2018 թվականի համայնքային բյուջեների ֆոնդային մասից 5,0 մլն ՀՀ դրամ և ավել համաֆինանսավորվող հայտերը,

2) 500,0-ից մինչև 1,0 մլրդ ՀՀ դրամ համայնքային բյուջե ունեցող համայնքների դեպքում՝ յուրաքանչյուր ծրագրի համար 2018 թվականի համայնքային բյուջեների ֆոնդային մասից 25,0 մլն ՀՀ դրամ և ավել համաֆինանսավորվող հայտերը, մեքենասարքավորումների ձեռք բերման դեպքում համայնքային բյուջեների ֆոնդային մասից 10,0 մլն ՀՀ դրամ և ավել համաֆինանսավորվող հայտերը,

3) 1,0 մլրդ և ավել ՀՀ դրամ համայնքային բյուջե ունեցող համայնքների դեպքում՝ յուրաքանչյուր ծրագրի համար 2018 թվականի համայնքային բյուջեների ֆոնդային մասից 50,0 մլն ՀՀ դրամ և ավել համաֆինանսավորվող հայտերը, մեքենասարքավորումների ձեռք բերման դեպքում համայնքային բյուջեների ֆոնդային մասից 20,0 մլն ՀՀ դրամ և ավել համաֆինանսավորվող հայտերը:

2. Ոչ խոշորացված համայնքների դեպքում՝ սուրվենցիայի տրամադրման նպատակով դիտարկվում են այն համայնքներից ստացված հայտերը, որոնք 2017 թվականին ապահովել են սեփական եկամուտների առնվազն 100 տոկոս կատարողականը, իսկ 2018 թվականի համար պլանավորված համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը գերազանցում են համայնքի 2017 թվականի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը:

3. Սուրվենցիայի տրամադրման նպատակով դիտարկվում են այն ծրագրային հայտերը, որոնց իրականացումը կնպաստի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների (հիմնական ֆոնդերի) ստեղծմանը (ձեռք բերմանը) կամ դրանց արժեքի ավելացմանը:

4. Հայտերի ներկայացման և գնահատման համար կիրառվում են հետևյալ մոտեցումներն ու սկզբունքները.

1) Հայտերը կազմվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ համայնքների 2018 թվականի բյուջեների նախագծերի կազմման գործընթացում կիրառելու պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումների Հավելված 5-ի պահանջներին համապատասխան:

2) Հայտերը պետք է բխեն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված համայնքի պարտադիր խնդիրներից, ինչպես նաև համապատասխանեն համայնքների 5-ամյա զարգացման ծրագրերին և ունենան շոշափելի ազդեցություն դրանց իրագործման վրա (միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով):

3) Հայտերը պետք է ներառեն նախագծանախահաշվային փաստաթղթերը, ծրագրի ֆինանսական գնահատականը և համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը:

4) Տնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագրային հայտերը պետք է հիմնավորված լինեն նաև տնտեսական վերլուծություններով՝ ներառելով տնտեսական աճի և նոր աշխատատեղերի ստեղծման վերաբերյալ վերլուծություններ:

5) Սոցիալական ենթակառուցվածքների զարգացման հայտերը պետք է ներառեն նաև հստակ չափանիշներ՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, թիրախային խմբերի վրա ազդեցությունների վերաբերյալ:

6) Սարքավորումների և տեխնիկայի ձեռք բերման հայտերը պետք է ներառեն հնարավորինս հստակ, հիմնավոր և մանրամասն տեխնիկական բնութագրերը, ֆինանսական գնահատականները և առնվազն երեք կազմակերպությունների կողմից տրված գնահարցումները և/կամ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կազմակերպված մրցույթի արդյունքում կնքված պայմանագիրը:

3. Սույն կարգի դրույթներին չհամապատասխանող, ինչպես նաև սույն կարգի հավելվածով սահմանված ծրագրային հայտի ձևաչափով չներկայացված ծրագրային հայտերը վերադարձվում են համայնքների ղեկավարներին՝ լրամշակման:

4. Հայտերի գնահատումն իրականացվում է հետևյալ փուլերով.

1) Հայտերի քննարկում Հանձնաժողովի քարտուղարությունում: Այս փուլում իրականացվում է հայտերի սույն կարգի դրույթներին համապատասխանության ստուգում և նախնական գնահատում՝ ըստ հետևյալ գնահատման բազմագործոն չափորոշիչների.

ա) տնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի դեպքում՝

չափորոշիչ	ենթաչափորոշիչ	գնահատական
1. Համայնքային միջոցների համաֆինանսավորման հաշվին	բյուջեի հաշվին ծրագրի նախագծային արժեքի 40-50 տոկոսի չափով համաֆինանսավորում	5
	ծրագրի նախագծային արժեքի 50.1-ից 60 տոկոսի չափով համաֆինանսավորում	7
	ծրագրի նախագծային արժեքի 60.1 տոկոս և ավել համաֆինանսավորում	10
2. Ծրագիրն իրականացնող համայնքի աշխարհագրական դիրքը	Մայրաքաղաքից մինչև 60 կմ հեռավորություն ունեցող համայնք	5
	Մայրաքաղաքից 60- 100 կմ հեռավորություն ունեցող համայնք	7
	Մայրաքաղաքից 100 կմ-ից ավել հեռավորություն ունեցող համայնք	10
3. Ծրագրի արդյունքում ծրագրի շահառուների քանակը	մինչև 50 շահառու յուրաքանչյուր 20 մլն դրամի ծախսի համար	5
	50-ից 100 շահառու յուրաքանչյուր 20 մլն դրամի ծախսի համար	7
	100 և ավել շահառու յուրաքանչյուր 20 մլն դրամի ծախսի համար	10
4. Ծրագրի արդյունքում հիմնական թիվը	1-ից 4 աշխատատեղ յուրաքանչյուր 20 մլն դրամի ծախսի համար	5
	4-ից 7 աշխատատեղ յուրաքանչյուր 20 մլն դրամի ծախսի համար	7
	8 և ավել աշխատատեղ յուրաքանչյուր 20 մլն դրամի ծախսի համար	10

- տնտեսական ենթակառուցվածքների զարգացման սուբվենցիայի ծրագրի նախնական գնահատական տրվում է միջին թվաբանականով՝ կիրառելով ծրագրերի գնահատման արդյունքները հետևյալ բանաձևում՝

$$\text{Ընդհանուր միջին գնահատական} = (\text{ենթաչափորոշիչների հանրագումար})/4:$$

բ) Սոցիալական ենթակառուցվածքների զարգացման դեպքում

Չափորոշիչ	Ենթաչափորոշիչ	Գնահատական
1. Համայնքային բյուջեի միջոցների համաֆինանսավորման համաֆինանսավորման չափը	ծրագրի նախագծային արժեքի 60-70 տոկոսի չափով համաֆինանսավորում	5
	ծրագրի նախագծային արժեքի 70.1-ից 80 տոկոսի չափով համաֆինանսավորում	7
	ծրագրի նախագծային արժեքի 80.1 տոկոս և ավել համաֆինանսավորում	10
2. Ծրագիրն իրականացնող համայնքի աշխարհագրական դիրքը	Մայրաքաղաքից մինչև 60 կմ հեռավորություն ունեցող համայնք	5
	Մայրաքաղաքից 60-100 կմ հեռավորություն ունեցող համայնք	7
	Մայրաքաղաքից 100 կմ-ից ավել հեռավորություն ունեցող համայնք	10
3. Ծրագրի իրականացման արդյունքում ծրագրի ուղղակի շահառուների քանակը	Համայնքի բնակչության մինչև 20 տոկոսը	5
	Համայնքի բնակչության 20- 40 տոկոսը	7
	Համայնքի բնակչության 40- ից ավել տոկոսը	10

- սոցիալական ենթակառուցվածքների զարգացման սուբվենցիայի ծրագրի նախնական գնահատական տրվում է միջին թվաբանականով՝ կիրառելով ծրագրերի գնահատման արդյունքները հետևյալ բանաձևում՝

$$\text{Ընդհանուր միջին գնահատական} = (\text{ենթաչափորոշիչների հանրագումար})/3:$$

2) Սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների համար կիրառվում է 1.2 գործակիցը:

3) Մասնավոր հատվածի /կազմակերպություններ, ձեռնարկություններ, բնակչություն/ կողմից ծրագրի 20 տոկոս և ավել համաֆինանսավորման դեպքում կիրառվում է 1,2 գործակիցը:

4) Քարտուղարությունը՝ նախնական գնատականների արդյունքները հայտերի հետ միասին ներկայացնում է Հանձնաժողովի անդամներին:

5) Հանձնաժողովի անդամները հայտերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում գնահատում են ծրագրային հայտերը 0-ից 3 գնահատականներով՝ ըստ ստորև ներկայացված չափորոշիչների և արդյունքները ներկայացնում քարտուղարություն.

0	Եթե առկա են հիմնավոր առարկություններ ծրագրի արդյունավետության մասով՝ ծրագիրը ենթակա չէ ֆինանսավորման
1	Եթե ծրագիրը մասնակի ազդեցություն կունենա համայնքի զարգացման և հրատապ հարցերի հիմնալուծման վրա
2	Եթե ծրագիրը կարևոր է համայնքի զարգացման համար
3	Եթե ծրագիրն էական ազդեցություն կունենա համայնքի զարգացման վրա և/կամ կնպաստի հրատապ հարցերի հիմնալուծմանը

6) Քարտուղարությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ամփոփելով հանձնաժողովի անդամների կողմից հայտերի վերաբերյալ ներկայացված գնահատականները՝ գումարելով այն համապատասխան հայտերի նախնական գնահատականներին, արդյունքները ներկայացնում է Հանձնաժողովի նիստի քննարկմանը:

7) Հանձնաժողովը նիստի ընթացքում կայացնում է հայտի ֆինանսավորման վերաբերյալ դրական կամ բացասական եզրակացություն.

8) Սուբվենցիայի տրամադրման դրական եզրակացություն տրվում է ընդհանուր միջին 6 և բարձր գնահատման միավոր ունեցող ծրագրային հայտերին:

9) Ծրագրային հայտի համապատասխան համայնքին սուբվենցիայի տեսքով տրամադրվող միջոցների չափը որոշվում է.

Ծրագրային հայտերի գնահատման արդյունքում յուրաքանչյուր ծրագրի միջին գնահատականը	Սուբվենցիայի տրամադրման տոկոսը՝ ծրագրի ընդհանուր արժեքի	
	տնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր	սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր
6.0-8.9	50	30
9.0 և ավել	60	40

5. Հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում, եթե չեն կիրառվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, համապատասխան հայտ ներկայացնող համայնքի ղեկավարին առաջարկվում է անցկացնել մրցութային գործընթացը և մրցութի արդյունքներով հաստատված հայտի բյուջեն ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

6. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարը օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում առաջարկություն՝ ծրագիրը ֆինանսավորելու համար Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեից համապատասխան համայնքին սուբվենցիայի տեսքով միջոցներ հատկացնելու վերաբերյալ:

7. Եթե չեն կիրառվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, Հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած և մրցութային փուլի արդյունքում ծրագրի ընդհանուր արժեքի նվազման դեպքում՝ խնայված գումարը բաշխվում է համամասնորեն: